




## 2. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

### ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ\*

#### 5. ԿՈՒՆՏԻ ՇՈՒՔԻՆ ՆԵՐՔԵՎ

Հովհաննես Կոլոտ Պոլսո Պատրիարքական Աթոռին և առհասարակ Պոլսո հայ կյանքին համար թվական մըն է, ինչպես թվական մը պիտի դառնար իրմե անմիջապես հետո իր ձեռնաստանն ու հաջորդը Պոլսո Պատրիարքական Աթոռին վրա՝ Հակոբ Նալյան, ու պիտի ստեղծեր այս կերպով մոտ կես դարու շրջա՝ մը (1715—1764), երբ Պոլսո Աթոռը և անոր հետ Պոլսո գաղութը պիտի ապրեին սթափումի մեծ պահը, պիտի սկսեր նոր հանգրվան մը, պիտի բեղմնավորվեր երկունքի դարը։

Տխուր իրականությունն այն է, որ այնքան ալ ստվար եղած չէ մտավորական բացառիկ դեմքերու թիվը Պոլսո Պատրիարքական Աթոռին վրա։ Մեծ պատրիարքներ անշուշտ եղած են, որ հայ ժողովուրդի սև օրերուն մեջ եկած են մաքառիլ ալիքներուն դեմ. անշուշտ եղած են նաև մտավոր որոշ պաշարով մարդիկ Պոլսո պատրիարքներուն մեջ, նույնիսկ գրչի մարդիկ ալ, բայց նոր օրերուն պետք է գալ Օրմանյանի պես տիտան մը, զմայլելի Դուրյանը և հուսկ ուրեմն Գարեգինի նման գրչի մեծ վաստակավոր մը գտնելու համար։ Հին պատրիարքներու շարքին մեջ երեքը եղան

սակայն, որոնք Հայ Եկեղեցվո պատմության մեջ կկոթողանան։ Արդարև, Գրիգոր Կեսարացիեն հետո, որ գրչի թանկագին վաստակ մը թողուցեր էր ժէ դարու առաջին կիսուն, ժ՛՛՛՛՛ դարը ևս երկու մեծ դեմքեր կու տար՝ Հովհաննես Կոլոտն ու Հակոբ Նալյանը։

Կոլոտը, ինչպես հիշեցինք, գրեթե բունի բերին Պոլսո Աթոռին վրա։ Այդ Աթոռը կգրավեր ան ճիշտ պահուն. փոթորակից այդ օրերուն մեջ, երբ բյուր հոգեբու բեռան տակ ընկճված էր հայ ժողովուրդը, մարդ մը պետք էր, որ ունենար բոլոր ձիրքերը, ալլազան ալլ հոգեբու իր ուսին վրա առնելու համար։ Կոլոտն եղավ այդ։

Առաջին հատկանիշը, զոր իր կենսագիրը<sup>537</sup> կհշտե Կոլոտի մեջ, շինարար ոգին է, զոր ան հետը կբերեր Ամրդոյեն։ Թրծված վարդան վարդապետի ձեռքին տակ, ինք և իր լծակից Գրիգոր վարդապետը արգեն մարզվեր էին Ս. Կարապետ վերաշինելու ժամանակ Մուշի մեջ, և իրենց ձիրքերը կոռային հիմա արժեքներ Պոլսո Գրիգոր Երուսաղեմի և ինք՝ Պոլսո մեջ։

Հաճախակի հրդեհները, որոնք կլափեին Պոլսո թաղերն ու եկեղեցիները, շվարման կմատնեին հայ հոգևոր իշխանությունը քանի մը տարին անգամ մը։ Ոչ միայն աղետի մատնվածներուն հոգածությունն ցույց տալ

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1962 թվականի № 8-ից, ԺԲ-ից, 1963 թվականի № 8 Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից, Զ-ից, Է-Ը-ից, Թ-Ժ-ից, ԺԱ-ից, ԺԲ-ից և 1964 թվականի № 8 Ա-ից, Գ-ից և Ե-ից։

<sup>537</sup> Բարգեն ծայրագույն վաղապետ Կոլոտեան, «Կոլոտ Հովհաննես պատրիարք», Վիեննա, 1904, էջ 29—33։

պետք էր, այլև կառուցանել հրոճարակ եղած եկեղեցիները: Ու հող կրկին էր դժվարություն: Անհրաժեշտ կղանար նախ նյութական միջոցներ ապահովել ժամ առաջ աղօթատեղիով օժտելու համար սգավոր թաղը: Բայց կար շատ ավելի հաճվոր դժվարություն մը՝ պետությունն հրաման ստանալ, վերաշինելու համար այրած եկեղեցիները: Նյութական մեծ զոհողություններու հանձնառու ըլլալ անհրաժեշտ էր ու նաև բացառիկ ճարտարություն՝ կորզելու համապատասխան ֆերմանը:

Պարագան ավելի կնճռոտ կղանար, երբ հարցը կվերաբերեր հայաշատ թաղի մը մեջ եկեղեցի մը կառուցանելու: Քանի կբազմանային հայերը այս կամ այն թաղին մեջ, կարիք կզգացվեր նոր եկեղեցիի մը. իսկ նոր եկեղեցիի մը կառուցման հրաման ստանալ գրեթե անհնարին էր, որովհետև թուրք իշխանությունները տրամադիր չէին քրիստոնյա տաճարներու թիվը ավելցնել մայրաքաղաքին մեջ, ու բացառիկ շնորհը, զոր կընեն, այրած կամ փլած եկեղեցիներու փոխարեն ուրիշ մը շինելու թույլտվությունն էր, այն ալ ճիշտ հինին տեղը, հինին բարձրությամբն ու տարածությամբը:

Պոլիս Կոլոտին կպարտի իր եկեղեցիներին շատերը:

Կոլոտն էր, որ 1719-ին վերաշինեց, Նրուսաղեմի Գրիգոր Շղթայակիր պատրիարքին հետ մեկտեղ, որ Պոլիս կգտնվեր այդ պահուն հանգանակության համար, Գովքափուրի Մայր Եկեղեցին, որ հրոճարակ եղած էր 1718 հուլիս 6-ի մեծ հրդեհին մեջ:

Կոլոտ 1722-ին նորոգեց Սամաթիո Ս. Գևորգ եկեղեցին, վերակացություն կեսաբացի Արաբօղլու Մեկտնի, որ Սուլթան Ահմեդ Գ-ի ճարտարապետն էր:

1726-ին վերաշինեց Օրթագյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, զոր Կարապետ Ուլնեցի կաթողիկոսը օծեց, իր իսկ օծումեն քիչ հետո. որ Պոլսո մեջ տեղի ունեցեր էր:

1727-ին վերաշինեց Սկյուտարի Ս. Կարապետ Սարգիս խալֆայի ճարտարապետությամբ, և միևնույն ժամանակ նորոգել տվավ Սկյուտարի հոգեւորներ, ծանոթ Նրուսաղեմի վանք անունով:

1729-ին կառուց և օծեց Խասպոլի Ս. Ստեփանոսը, որուն հրամանը հաջողք էր ստանալ մահտեսի Հարություն Թեմեքեյան հայ երեկին:

1729-ին վերաշինեց նաև Պալաթի Ս. Հրեշտակապետը, զոր նույն տարվա հուլիս 16-ին հրդեհը լափեր էր հունական 13 եկեղեցիներու հետ մեկտեղ:

Կոլոտի շինությանց գլուխ-գործոցն եղավ սակայն Ղալաթի Ս. Լուսավորիչը, որ այրեց էր 1731-ի մեծ հրդեհին և որուն շինության

հրամանը կդժկամակեին տալ թուրքերը և, ինչպես կըսե Հաննա, «Յովհաննէս վարդապետն հանդերձ ամենայն քահանայիք և բազում ժողովրդօք պէսպէս նեղութիւնս և շարժարանս կրեաց վասն հրամանի շինութեան, և ո՛չ եղև հնար յումեքէս»<sup>538</sup>: Այնպես որ հազիվ 1732 հոկտեմբերին էր որ Արքունի դաւ՝ «Ժայրագուն վաճառապետ» մահտեսի Սեդրեստոս կրցավ շինության հրովարտակն ստանալ Մահմուդ Ա սուլթանեն, մեծ եպարքոս Ալի փաշայի ձեռքով, և Կոլոտ, Սարգիս խալֆայի գլխավոր ճարտարապետությամբ և մահտեսի Սեդրեստոսի նյութական ձեռնտվությամբ, հաջողեցավ զայն վերաշինել և օծել 1733 մարտ 10-ին: Կոլոտի վերաշինած այս եկեղեցկաշէն եկեղեցին, որուն նմանը, ինչպես կըսե Հաննա, «ոչ ի Կոստանդնուպոլիս և ոչ յայլուր կարէ գտանել», 1771-ին հրդեհի զոհ պիտի տար փայտաշէն իր զույգ թևերը:

Կոլոտ կարկառուն դարձավ իր խոսքին հմայքովն ալ, և իզուր չէ, որ իր կենսագիրը, շինարարեն անմիջապես հետո, բնաբասացն ալ կպանծացնե հանձին Կոլոտի<sup>539</sup>, ձիւրք, զոր նույնպես ան կպարտի Ամրոլի, ուր վանականներուն մեջ հոնտորը ևս կմարզվեր:

Աստվածաբանական հմտությամբ օժտված ճարտասանը կփառաբանեն իր մեջ իր գրեթե բոլոր ժամանակակիցները: Նալյան «գերագանց աստուածաբանութեան վարդապետ» կանվանե զայն<sup>540</sup>, իսկ Հաննա մասնավորապես կշեշտե, թե Կոլոտը կսիրվեր «վասն առաքինի բարուցն և ևս անհամեմատ քարոզութեան, որ գրեթէ է՛ր ազգիս մերոյ նոր Ոսկերեան և կրկին աստուածաբան»<sup>541</sup>:


Որքան ալ երկյուղածության տուրք մշ պահվորի իր ժամանակակիցներու գնահատությանց մեջ, սա ստույգ է, որ ան գերագանցապես հմուտ էր հոնտորական արվեստին, և ավելի խոսքով էր, որ կրնար ունկընդիրները հմայել, քան թե գրչով, ձիւրք, որուն համար կակնածեին անկե բոլորը, հայերն ըլլան թե օտարները, որոնք, ըստ Հաննայի, երանի կուտային ժողովուրդի մը, «որ այնպիսի հրաժորան վարդապետ ունէին, յայնպիսի յետնեալ ժամանակիս և այնքան մինչ զի նրբամիտ ազգն լատինացւոց զարմացեալ հիանային հրաբորբօր և աստուածաբան

<sup>538</sup> Յովհաննէս Հաննա, «Գիրք պատմութեան Սրբոյ Քաղաքին Աստուծոյ Նրուսաղեմի», Կ. Պոլիս, 1767, էջ 147—148:

<sup>539</sup> Բարգեւ ծայրագուն վարդապետ Կյուլեսբեյան, հիշված աշխատությունը, էջ 34—41:

<sup>540</sup> «Վէմ հաւատոյ»:

<sup>541</sup> Յովհաննէս Հաննա, հիշված աշխատությունը, էջ 112—113:



բարոգութեան նորին, զի յոյժ կատարեալ ունէր զփիլիսոփայական և զաստուծաբանական գիտութիւնն»<sup>542</sup>:

Բարգեն կեդրակացնե, թե «հակառակ իր համեստութեան, զոր շափազանցորեն կմշակէ իր հիշատակարաններուն մեջ գիտել տալու համար, թե ինքը զուրկ է աստվածաբանական շնորհքն և Ս. Գրքերը մեկնելու իմաստութեանն, Կոլոտը կենդանական պատմութեան առջև իբր ժամանակակից ուսումներով զարգացած ուսյալ վարդապետ մը»<sup>543</sup>:

Կոլոտ ոչ նվազ մեծ եղալ իբրև գրասեր: Ուժեղ էր իր մեջ կիրքը դեպի ամեն ինչ: Որ սակաված էր գրի և գրականութեան: Եթե իր պաշտոնական զբաղումները հնարավորութիւն չտալին իրեն, որպէսզի պարապի գրական ստեղծագործութիւններով ևս, փոխարեն ան ձգտեցաւ պատրաստել սերունդ մը, որ իր ձրովներ դպրութեանց: Եւ այս տեսակետով մեծ եղաւ իր երախտիքը, որովհետեւ հաջողեցաւ այդ սերունդը պատրաստել: Այն օրվան պայմաններուն մեջ հրաշք էր այդ: Դավանական վեճերու այն քառսին մեջ, զոր իր նախորդներ էր ժառանգել դարը և որ միշտ կշարունակել մթադնել Պոլսո հայ կյանքը, սովորական մարդոց տրված չէր վեճերն վեր բարձրանալ, և մանավանդ վստահութիւններ չէր զանգվածներուն: Կոլոտ արդարացուց վարկը, զոր հայ ժողովուրդը բացել էր իրեն: Զայն արդարացուց ոչ թե միայն իր խոհականութեամբ և իր վարչական ձիրքերով, այլ նաև շնորհիւ այն բացառիկ նպաստին, զոր ան բերաւ հայ դպրութեանց:

Պոլսո Կոլոտի կպարտի իր առաջին մատենադարանը: Կոլոտեն առաջ ալ անշուշտ տրված է ձեռագիր գրքերու դարակներ կային Պոլսո զանազան հայ եկեղեցիներու խուցերուն մեջ: Բայց Կոլոտ ուզեց իսկական մատենադարան մը հիմնել Պատրիարքական իր Աթոռին առնիթեր, այնպէս ինչպէս հայոց վանքերն ունեին, մատենադարան, որ կարենար սնունդ տալ իրեն դիմողին: Կոլոտ իր մատենադարանը սկսաւ օժտել գրքերով և ձեռագիրներով, ու քիչ ժամանակէն հաջողեցաւ պատկառելի դարձնել զայն: Այն օրերու պայմաններուն մեջ դուրսին չէր անշուշտ Կոլոտի փորձը, և եղական ալ մնաց, որովհետեւ շատ կարճ տեւեց ան: Հակոբ Նալբան, իշ ձեռնաստունն ու հաջորդը, պահ մը զայն ճոխացուց ինքն ալ, որպէսզի իրմե ալ հետո, անկուն մը մնալու դատապարտվին երկու պատրիարքներու հովաքած հարյուրավոր այդ հատորները: Մեկուկէս դար հետո էր միայն,

որ Պոլսը դժգոյն փորձ մը պիտի ընէր ազգային մատենադարան մը ունենալու, իսկ այդ մատենադարանին հիմնական կորիզը Կոլոտի ու Նալբանի հովաքած ձեռագիրներն ու հազվագյուտ հրատարակութիւնները պիտի ըլլային: Երկու պատրիարքներն հետո Պոլսո դարձաւ թաղերն էր քաշվեր, և եկեղեցական խուցն էր տարեր մտավոր կյանքը, և այդ եկեղեցիներու խուցերուն մեջ էր, որ սկսեց էին հովաքայի դարձալ հայ ձեռագիրներն ու գրքերը, ամեն թաղ զատ-զատ...:

Պոլսո Կոլոտի կպարտի նույնպէս իր առաջին լուրջ ուսումնարանը: Պոլսո մեջ նախապէս ալ եղել էին կրթական համեստ օջախներ այն կամ այն թաղը և ասոնցմէ ոմանք նույնիսկ փայլել էին երբեմն-երբեմն: Բայց Կոլոտն էր, որ փորձեց կրթութեան իսկական հարկ մը ստեղծել իր անմիջական հովանիին տակ, իրմե հետո սերունդ մը ձգելու տենչով, այնպէս ինչպէս վանքերու մեջ մեկ սերունդը կհաջորդէր մյուսին, իրարու փոխանցելով իր ժառանգած ճրագը:

Ժամանակակից աղբյուրները ժառանգ մանրամասնութիւններ տալու մեզ այդ ուսումնարանին ստեղծման պարագաներուն մասին: Զամյանն անգամ հետազային քանի մը տողով միայն զայն պիտի հիշել, ըսելով, որ ասոյն այս Յովհաննէս վարդապետ երաց և զդպրատունն յիսկիւտաղ և աշակերտեաց զբազումս»<sup>544</sup>:

Փոխարեն, հայտնի է սակայն մեզ դերը, զոր կատարեց այդ ուսումնարանը, որ Սկյուտարի բարձունքը թառած, Ս. Կարապետ եկեղեցիով հովանիին տակ, Ամրդուր կշարունակելու Աշակերտներու սովոր թիւ մը հովաքած պետք է ըլլա այնտեղ Կոլոտ ու զանոնք հանձնած ընտիր դաստիարակներու խնամքին, որոնց մեջ էր այն օրերու ամենն հմուտ մարդը՝ Դոմէաս վարդապետ Խարբեղոցին: Կոլոտ ինքն ալ պետք է մտնէր դրաղած ըլլա իր հոգեւոր սաներով, և հետեւած ոչ միայն անոնց ուսման, այլև անոնց բերած եռանդուն մասնակցութեան մտավոր զարթոնքի նոր ճիգերուն մեջ, որոնք առավելապէս թարգմանութիւններն էին այն օրերուն:

Սկյուտարը Պոլսո վերածնութեան թաղը կդառնար այդ կերպով: Եթե Գոմազափուն իր վարչական գործունեութեան խարխախն էր իր Պատրիարքարանով և անոր կողքին ստեղծված Մատենադարանով, Պոլսո հանդիպական եղբերքին՝ Սկյուտարի մեջ էր Կոլոտի գորգուրանքին մյուս առարկան՝ իր դպրատունը: Սկյուտար և հոգեւոր կեդրոն մը կդառնար այսպէս, ու դպրատան ճիշտ կողքին կստեղծէր նաև իր վանքը՝ Երուսաղեմինը, ուր հա-

<sup>542</sup> Անդ, էջ 131:

<sup>543</sup> Բարգեն, Ժայռագոյն վարդապետ Կյոպսեբյում, հիշված աշխատութիւնը, էջ 41:

<sup>544</sup> Զամյան, Գ, էջ 775:

վանաբար կոռւային իջեանիւ Երուսաղեմի պատրիարքները, թեև Մայր Եկեղեցւո ընդհին ալ Երուսաղեմ իր հարկը ունեն, որ մինչև մեր օրերուն հասաւ, մեր գիտցած Երուսաղեմատունը:

Կոլոտի բացած ճաշ դպրոցը Թուրքիո հայոց ԺԲ դարու կյանքին վրա հանգրվան մէջ<sup>545</sup>, — կրսե Կոլոտի կենսագիրը, և իրավամբ: Բաւական է հիշել պատկառելի թիվը հոգևորականներուն, որոնք իրենց ուսումն ստացան Կոլոտի շունչին տակ, և որոնց ցանկը բարեբախտաբար մեզ կհասնեն դարուն ժամանակագիրներին մեկը՝ Սարգիս դպիր Հովհաննեսյան: Կոլոտե ձեռնագրված վարդապետները այդ ցանկին մեջ 23 են թվով, բացի չորս սարկավագներն, որոնցմն ոմանք իրենց վարդապետական կոչումը պիտի ստանային Կոլոտի մահէն հետո: Եվ ավելցնենք անմիջապէս, որ այդ ցանկին մեջ կայսպղան և անունը Հակոբ Նալանին, որ պիտի լրացնեն Կոլոտի գործը, իր կարգին նոր թվական մը բանալով: Այդ ցանկին մեջ է նունպա Սահակ Ահագինը, որ հետագային պիտի դառնար պատրիարք և նույնիսկ կաթողիկոս պիտի ընտրվեր, թեև առանց հաջողելու գահ բարձրանալ:

Իր ստեղծած սույն դպրոցով Կոլոտ հաջողեցաւ սերունդ մը թողուլ, և հետևաբար հետք մը նաև իրմն ետք: Ժամանակակից մը, որ իր կարգին դեր ունեցած է դարուն ճիգերուն մեջ, Գրիգոր դպիր Մարգվանցի մեծ տպագրիչն ու փորագրիչը, իր 1730-ին տպած համբավավոր «Յայսմաւուրը»-ի հիշատակարանին մեջ կգրեն Կոլոտի թրծած սերունդին մասին. «Յովհաննէս վարդապետն ժողովաւ դաշակերտս բազումս ստացաւ ի պարծանս մերոյ աղղիս աստուածաբան վարդապետս և բարողիչս, զի մի՛ յառաջին խղճութիւն անկցի աղգս մեր. այլ տեսաւ աշակերտք սոցա (Կոլոտի և Շղթայակրի) զվարս և զգնաց վարդապետացն այնոցիկ՝ նմանողք եղիցին զործոց հոգևոր հարցն իւրեանց, որ և կան այժմ և տածեն զաղգս մեր ի խոր խաղաղութիւն, մին յԵրուսաղէմ և միւսն աստ»:

Հիմնական մտահոգութիւնը, զոր Կոլոտ հետը կրեբեր Ամրդուն, իր կողքին սերունդ մը ստեղծելու բացառիկ ճիգն էր արդարեւ, ճիգ, որ վերագույն պսակն է, զոր իր ճակտին կրնա հշուել մարդ, եթե մանավանդ իր մեջ կիրքը կա ապրելու իրմն հետո ալ: Երկուբուկնս դրե ավելի էր, որ կաւեր հայ գաղութը Պոլսո մեջ, պատրիարքներն Աթոռին վրային կանցնեին շարան-շարան, չեւեբները կհաջորդեին խոջաներուն, այսինքն մեկ երեւիին

հետո մյուսը կուգար, բայց սերունդներուն միջև կարծես կապ չկար, որովհետև սերունդները սեփական դիմագծութիւն չէին ունեցեր դեռ, իրենց հարազատ ավանդութիւններով: Կարկառուն դեմքեր Պոլիսն ալ ունեցեր էր, բայց ոչ մեկը չէր կրցեր սերունդ մը ստեղծել շուրջը, բան մը փոխանցել իր հաջորդներուն: Կոլոտ այդ փորձն էր որ ըրավ:

Անհնար էր սակայն սերունդ պատրաստել, առանց անոր հոգին գիտութեամբ խմորելու: Գրեբեր պետք էին անոր, որպէսզի այդ նոր սերունդը ընդլայնէր մտքի իր պաշարը: Եթե հայ վանքերն շատեր կրցեր էին մտավոր օջախներ դառնալ, առավելապէս կպարտին իրենց ամբարած գրեբերուն:

Կոլոտ այդ շատ լավ գիտեր և հետևաբար իր առաջին մտածումն եղաւ գիրք տալ սերունդին ձեռքը, որ իր ձեռնասունները պիտի ըլլային, և գիրք տալ նաև զանգվածներուն, որպէսզի անոնց ևս բացվի լուսի նոր ճամբան:

Սերունդ հասցնելու իր այդ մտահոգութեան մեջ, Կոլոտ նախանձախնդիր եղաւ նախ թարգմանութիւններով օժտելու հայ գրականութիւնը, նախանձախնդրութիւն, որուն ձգտեր էր հայ միտքը առաջին օրն: Ամբողջ սերունդներ տքնուր էին երբեմն թարգմանութեանց վրա, ու հայ մասնագրութիւնը պատկառելի էր դարձել շնորհիւ անոնց: Անոնք էին, որ պատվաստեր էին հայ միտքը շատ մը դարեր, և անհրաժեշտ էր, որ անոնք զայն պատվաստեին նոր օրերուն ալ: Շատ մը խորթ դարեր ընդմիջեր էին երբեմնի այդ ոգևորութիւնը, փակեր էին լուսամուտը հայ մտքին առջև:

Կոլոտի և իր դպրոցին հիմնական մտահոգութիւններն մեկը կազմեց այդ նոր լուսամուտը բանալ: Հայ գիտակցութիւնը շատ մը դարեր ի վեր պատած էր խավարով: Երկար ժամանակ ի վեր ան իր կապը խզած էր դուրսի աշխարհին հետ և անհաղորդ կմնար նոր օրերու մտածումներուն: Իր այս անգիտութիւնը կշահագործեին մանավանդ կաթոլիկ քարոզիչները, իր առջև փռելով աստվածաբանական տեսութեանց ամբողջ հեղեղը, զոր կրեբեին Հոռոմի իրենց փոխընդմիջումները շլացնելու և շփոթեցնելու համար: Պետք էր անոնց ձեռքն խլել իրենց զենքերը:

Կոլոտ եթէ հաջողեցաւ անոնց ձեռքն բռնողովին խլել իրենց զենքերը, բայց կրցաւ զանոնք բթացնել մեծապէս:

«Գալով Կոլոտի դպրոցի գրական գործունեութեան, — կգրեն լեւոն, — մենք տեսնում ենք այստեղ ևս լայն և առողջ հիմքերի վրա հանգող ձգտումներ: Կոլոտը մտածում է թարգմանել և հարստացնել հայոց կրօնական գրականութիւնը Եվրոպայի համապատաս-

<sup>545</sup> Բարգեւ ճայրագույն վարդապետ Կյուլեսերյան, հիշված աշխատութիւնը, էջ 69:

խան գրականությունից վերցրած թարգմանություններով, այլ խոսքով՝ նա է, որ մտածում է հայերի մեջ կազմակերպել լուսավորված վանականություն<sup>546</sup>, — լուսավորված վանականություն մը, որ ոչ թե երթար վանքերը քաշվեր, այլ զանգվածներուն մոտենար, չեզոքացնելու համար կաթոլիկ քարոզությունը: Այդ նպատակին հասնել կկարծե՞ր օտար աստվածաբանական գրականությունը մատչելի ընելով նախ հայ հոգևորականության:

Կոլոտի պաշտոնական հոգեբեր թույլ չէին տար իրեն թարգմանությունաց նվիրվիլ անձամբ, թեև իր պատրաստությունն ալ ձեռնառու չէր հավանաբար այդ բանին: Բայց ինքն էր, որ անձամբ մղում տվավ թարգմանությունաց, և այն բերքը, որ ստացվեցավ, բացառապես իր իսկ արգասիքն է:

Արդարև, Կոլոտ ինքն իսկ կգրե իր օրով կատարված թարգմանություններեն մեկուն՝ «Անտառ ալաբանությունն Ս. Դրոց» գրքին հիշատակարանին մեջ. «Բայց իմ նկատեալ ի փարթամութիւնս լատինացւոց և յաղքատութիւն ազգին իմոյ և իմ իսկ գլխովին (ի կողմանէ իմաստութեան և մեկնութեան Աստուածաշունչ գրոց) թախծէի և մորմոքէի ի սրտի իմում, թէ վասն ո՞ր զհեղգութիւն նախամեծար անէ ազգն իմ և զանուսումնասիրութիւն քան զուսումնասիրութիւն ընտրելի համարի, և մանաւանդ վասն ո՞ր պատճառի քա՛ղազգն իմ այլ առաւել աղքատագոյն ազգին պերճացեալ իցեն իմաստութեամբ, որպիսիք են Ասորիք և Վրացիք, յորոց զբազում բանս ի նոցունց թարգմանեալ ցուցանեն նախնիք մեր. վասն որոյ գոնէ զի թեքսա այլոցն փարթամութեամբ զազգն իմ և զիս փարթամացուցից և բոլորի Աստուածաշունչ գրոց զհամառոտական այլաբանական մեկնութիւն ի լոյս ընծայեցից (ոչ իմովս ուշիմութեամբ, յորմէ շնորհէ մերկ էի և եմ), այլ թարգմանութեամբ և ածածեցութեամբ զայլոցն յիմումս ազգի շտեմարանին»<sup>547</sup>:

Կոլոտի կողմն թարգմանությունաց տրված այս զարկը ժամանակակից Հովհաննես Հաննան կնամանցնե այն նախանձախնդրության, որով ոգևորվեր էր Ոսկեդարու սերունդը<sup>548</sup>:

Հիմա ծանոթանանք նաև այն մարդուն, որուն հմտությունն ու ձեռնհասութեանը գիմում ըրալ Կոլոտ իր ծրագիրը իրականացնելու համար:

Որպեսզի հայ միտքը հասուննար Պոլսո մեջ, ու իր ծոցնն դնէր հայտնվին, պետք էր որ համեստ մարդիկ ևս տընեին ու ճամբաբանային մեծ անուններուն: Շուրթն մեջ մնացած մարդիկ են հաճախ, որոնք իրենց սէ աշխատանքովը սերունդի մը թթխմորը կդառնան և կսատարեն իրենց օրերու մեծ ճիգերուն: Ամեն մեծ շարժում, մեծ դեմքերու կողորոն: Այն, որ զայն առաջնորդած են, իր խոնարհ աշխատավորն ալ ունեցած է, որ տընած է մութին մեջ, թեև պատմությունը հաճախ ժլատ եղած է անկյուն մը արձանագրելու անոր անունը:

Կոլոտ բարեբախտ եղավ, որ թանկագին աջակից մը հայտնվեցավ հանկարծ իր կողքին, որպեսզի զարհուրելի հոգ մը ստանձնէ, հոգը թարգմանություններուն, որոնց կարիք ուներ մեծ պատրիարքը սերունդ մը ստեղծելու իր ճիգերուն մեջ: Այդ մարդը Խարբերդցի Ղուկաս վարդապետն էր, «որդի Աբրահամու, ի տոհմէն Գասպարեան», ինչպես ան ինքզինքը կկոչէ 1730-ին թարգմանած «Խարբերութիւն աշխարհի» գրքին հառաջաբանին մեջ:

Իտալիա կրթված էր ան և հոն հմտացած լատիններենի և իտալերենի: Անոր ներկայությունը Պոլսո մեջ Կոլոտի պատրիարքության օրերուն՝ ավելի քան բախտավորություն մըն էր մեծ ծրագիրներու անձնատուր եղած պատրիարքի մը համար, որ առաջին օրեն հմայվեցավ Խարբերդցիի ձիւրքերն և որ Սկոթի «Աստուածաբանութեան» թարգմանության հառաջաբանին մեջ կըսէ անոր թարգմանչին համար. «Խարբերդցի Ղուկաս յոզնահանձար վարդապետն, կարի քաջ տեղեակ լատինական լեզուի, որ գրեթէ միայն ի մակերևոյթ նախագաղափարին նշմարեալ, անդէն հայկական բառի իբր զհասարակ զրոյց արտաբերէ»<sup>549</sup>:

Արդ, այս մարդն էր, որուն վստահեցավ Կոլոտ թարգմանությունաց մեծ հոգը, և որ, պետք է ըսել, արդարացուց Կոլոտի հույսերը, ոչ միայն ինք անձամբ թարգմանելով, լատիններեն և իտալերեն, այն օրերուն հեղինակություն համարվող օտար աստվածաբաններու երկերը, այլ և մարդելով, իր անմիջական շունչին տակ, աջակիցներ ալ, որոնցմէ հայտնի պիտի դառնային հետագային երկու վարդապետներ Կոլոտի իսկ սաներեն՝ Հարություն և Հակոբ, այս վերջինը ապագա մեծ պատրիարքը:

Չի կրնար խելքի պտույտ չտալ մարդու հսկա այն մատենադարանը, զոր իր թարգմանություններով լեցուց, մոտ քառորդ դարու ընթացքին, Ղուկաս Խարբերդցին և որ

<sup>546</sup> Լեւո, «Հայոց պատմություն», Գ, էջ 946:

<sup>547</sup> Բարգեւ արքայից կարողիկոս, «Ծուցակ Ժողովրդայն Ղալաթի ազգային մատենադարանին», Անթիլիաս, 1961, էջ 7:

<sup>548</sup> Յովհաննէս Հաննա, հիշված աշխատությունը, էջ 171—173:

<sup>549</sup> Բարգեւ Ժայռագույն վարդապետ Կյուսեբյան, հիշված աշխատությունը, էջ 187:

անդրանիկ կորիզը պիտի կազմեր հետո Ղալաթիո երբեմնի ազգային մատենադարանի ձեռագիրներու ֆոնդին: Յանկը, զոր համբերություն ունեցանք բաղելու նույն ձեռագիրներու ցուցակին<sup>550</sup>, բավական է ինքը սարսափով համակելու բեզ:

1. «Համառոտութիւն օրինակաց և իրաց նմանութեանց», հորինված Հելիկոս Թեոդոնացի և սրբադրված Հոհան Սանճիմիանեցի և թարգմանված 1717-ին. 909 երես:

2. «Պատմութիւն Սրբոյ Երկրին», երկու հատոր, հեղինակություն հայր Մարիանոս Իմալեո, թարգմանված իտալերեն Մադաբիա դպիր Ճևահիրճյանի գործակցությամբ 1725-ին. 550+536=1080 երես:

3. «Բանք ոսկիական և գեղեցկագոյնք (կամ «Քարոզգիրք կիւրակէից») և Արհեստ նարտասանութեան», երկու հատոր, հեղինակություն Հակոբ Վոսաճին, Քարոզողաց կարգին. 584+68=652 երես:

4. «Մեկնութիւն երկուստեան մարգարէից», թարգմանված 1746-ին, Նալյանի օժանդակությամբ. 1486 երես:

5. «Անտառ ալաբանութեան բոլորի Սուրբ Գրոց», թարգմանված 1733-ին. 1826 երես:

6. «Աստուածաբանութիւն Սկոթոսի», թարգմանված 1729-ին. 951 երես: Ձեռագիրը կպարունակի նաև Արիստոտելի «Բնաբանութիւն»-ը (114 երես) և «Էմաստասիրական վիճաբանութիւն ֆիսիկային գիտութեան, որ բարգմանի բնաբանութիւն, շարակարգեալ ի կարգէ բխտինոսաց կղեմէս աստուածաբան վարդապետէ» (23 երես):

7. «Մեկնութիւն Երեմիայ», թարգմանված 1750-ին. 636 երես:

8. «Մեկնութիւն Եզեկիէլի, Կուռնելիոս լատինական վարդապետի ի կարգէն Յիսուսեանց», թարգմանված 1747-ին. 1296 երես:

9. «Ջեմեմուանդ մտածմունքն Սրբոյն Օգոստինոսի ընդ միայնախօսութեան և հաւապագորդական ձեռնարկութեան», թարգմանված 1747-ին. 429 երես:

10. «Խաբէութիւն աշխարհի», երկու հատոր, հեղինակ Թեոդորոս Ճեննարիոս, թարգմանված 1730-ին. 640+804=1440 երես:

11. «Ներկրքումն ապաշխարողի», հեղինակ Պողոս Սենեքո ի կարգէն Հիսուսյան. թարգմանված 1732-ին. 182 երես:

12. «Լուսատւութիւն խոստովանութեան», հեղինակ Գուլիելմոս Փեփինիան, թարգմանված 1725-ին. 1126 երես:

13. «Պարտէզ հովուաց», հեղինակութիւն Հակոբ Մարկանտոնի, Ղուկաս վարդապետի

թարգմանութեան 1825-ին Ջմյունիո մեղրնդորինակված Հովհան քահանա Միրզա-Վանանդեցիի ձեռքով. 552 երես:

14. «Մեկնութիւն իմաստութեան», հեղինակություն Կուռնելիոսի Կուռնելյան, ի միաբանութեան Հիսուսյան, թարգմանված 1751-ին. 1448 երես:

15. «Մեկնութիւն Եկէսիաստեայ (Ժողովող)», հեղինակություն նույն Կուռնելիոս Կուռնելյանի, թարգմանված 1752-ին. 1512 երես:

16. «Մեկնութիւն Եկէսիաստիկեայ (Սիւրաբ)», չորս հատոր, թարգմանված միևնույն հեղինակին 1753-ին. 1248+1008+1152+1080=4488 երես:

17. «Մեկնութիւն քղբոցն Պողոսի», չորս հատոր, թարգմանված 1749-ին. 792+972+912+1224=3900 երես:

18. «Մեկնութիւն Կաթողիկեայց», թարգմանված 1749-ին. 1704 երես:

19. «Անտառ նորագոյն մտածմանց», հեղինակություն Աղեքսանդր Գալամաթոյի, թարգմանված իտալերեն 1741-ին. 806 երես:

Նույն մատենադարանին մեջ կան վեցյակ մը ձեռագիրներ ալ, որոնց հիշատակարանը կպակսի, և որոնք անկասկած միևնույն Ղուկաս Խարբերդցիի թարգմանութեանն են, դատելով թարգմանութեան ընդմիջման ինչպես նաև գրեն, որ Խարբերդցիին է միշտ:

20. «Մեկնութիւն Ղևազուց, Թուոց և ԲՕրինաց», 823 երես:

21. «Մեկնութիւն Դանիէլ մարգարէին», 480 երես:

22. «Մեկնութիւն Առակացն Սողոմոնի», երկու հատոր, հեղինակություն Կուռնելիոսի Կուռնելյան, ի կարգէն Հիսուսյան. 1920+1686=3606 երես:

23. «Մեկնութիւն կանոնական ընթերցուածոց», հեղինակություն նույնին. 380 երես:

24. «Արիստոտել, զպատմութեան կենդանաց», վեցերորդ մատյան. 439 երես:

Բարգին վարդապետ Ղուկաս վարդապետի ձեռագիրը կկարծես նաև Ղալաթիո ազգային մատենադարանի ձեռագիրներին մեկ ուրիշն ալ:

25. «Պատմութիւն ոռոսաց», Գևորգ Կոնստանտինոս Յաննացվո հունարեն երկին հայ լեզվի թարգմանված 1769-ին:

Ասոնցմե զատ Հաննա վարդապետ, որ Ղուկաս Խարբերդցիի կատարած թարգմանութեանց ցանկը կուտա, Երուսաղեմի իր պատմութեան մեջ կհիշե անոր ուրիշ երկերն ալ, որոնք կպակսին սակայն Ղալաթիո մատենադարանի ձեռագիրներուն մեջ, ինչպես են՝

26. «Գիրք եօթն խորհրդոց Եկեղեցայ»:

<sup>550</sup> Բարգին արքայից Կաթողիկոս, «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիո ազգային մատենադարանին», Անթիպաս. 1961:

27. «Գիրքն այն որ կոչի շեմեռանդ կեանք»:

28. Գիրք իմն քառագուրեմն ի վերայ ամենայն կիրակեցիք բոլոր տարւոյն»:

29. «Փոքր գիրք իմն ի վերայ Հայր մերին»:

30. «Գիրք վասն գղղման և ապաշխարութեան»:

31. «Փիլիսոփայական գրեման Կովտտին կոչեցելոյ, այսինքն զառաջին հատորն որ է լոճիգայ, և երկրորդն որ է ֆիզիգայ, իսկ երրորդն և չորրորդն որ է մէթաֆիզիգայ և բարոյական, որք զեռ ևս ոչ են թարգմանեցեալ, այլ են կիսակատարք»<sup>551</sup>:

Վերի ցուցակին պետք է կցել նաև Ղուկաս վարդապետի կողմն կատարված ուրիշ թարգմանություններ ալ, որոնք պահված են զանազան մատենադարաններու մեջ: Էջմիածնի նախկին մատենադարանը ունեցած է, օրինակ, անոր քանի մը ձեռագիրները, որոնք հավանաբար Մեսրոպ Մաշտոցի անվան երևանի մատենադարանը կգտնվին ներկայիս: Քանի մը ձեռագիրներ՝ ալ Վիեննայի Մխիթարյանց մոտ կան, այնպես որ վերիցանկին վրա կարելի ավելցնել՝

«Օգոստինոսի աղօթք միայնախօսութիւնք, գրեալ ի Կ. Պոլիս ի Ղուկաս վարդապետէ ի թուին Հայոց ՌՃԷԶ» (1747)<sup>552</sup>:

«Մեկնութիւն Ղևոնցաց և Երկրորդ Օրինաց ի Յովհաննէս դպրէ, ի թուին Հայոց ՌՃԷԷ» (1749), թարգմանեալ ի Ղուկաս վարդապետէ հարբերդցոյ»<sup>553</sup>:

«Պատմութիւնք Երկուց մասանց յաշխարհի Ամերիկայի և Աֆրիկայի, թարգմանեալ ի լատին լեզուէ ի հայ, ի Ղուկաս վարդապետէ հարբերդցոյ, ի Կ. Պոլիս, յամի ՌՃԷԶ» (1727)<sup>554</sup>:

«Մեկնութիւն Յայտնութեան Սրբոյն Յովնանու, հեղինակությամբ հօր Գրգորիոսի Գրգորեան ի Լափիտայ. թարգմանեալ եղև ի լատինականէ լեզուէ ի հայկական բարբառ ի Ղուկասու վարդապետէ հարբերդցոյ, ի խնդրոյ Տեառն Յովհաննիսի Բաղիշեցոյ»<sup>555</sup>:

«Կոտնեկիսի մեկնութիւն քղքոյն Կորնթացոյ», հայտնական թարգմանիչ Ղուկաս վարդապետ հարբերդցի»<sup>556</sup>:

«Գրքով իմն վասն հախաասմամանութեան, Սրբոյն Թովմայի հրեշտակակրօն վարդապետի», զոր ըստ խնդրոյ Սարգիս վարդապետ Սարաֆյանի թարգմանած է Ղուկաս վարդա-

պետ, և զոր Սարգիս տպած է Վենետիկ. 1748-ին, «էֆիմէրիտէ»-ի իբր հովանով»:

Ղուկաս վարդապետի լատիներենն կամ լատիներեն թարգմանած այս գրքերն առաջինն է միայն, որ լույս տեսած է Վենետիկ, Անտոն Պոռթուլի տպարանն 1750-ին, Սահակ Ահագին պատրիարքի ջանքերով, «Գիրք օրինակաց և հմանութեանց» տիտղոսով: Մնացյալները բոլորն ալ անտիպ կման և ամբողջ դարակ մը կլեցնեն Ղալաթիո երբեմնի մատենադարանին մեջ: Մեր պատանեկության ժամանակ սարսափով և պակասակամ կղիտները մենք զանոնք, երբ Կեդրոնականի աշակերտներն քանի մը բախտավորներու Բաբգին վարդապետի շնորհնման օգուովելով, մատենադարանն ներս կսպրդէինք քանի մը վարկչկան:

Վիթխարի այս աշխատանքը, որուն լրծվեցավ Ղուկաս վարդապետ հարբերդցին, հիացում միայն կրնա պատճառել մարդուս:

Կոլոտի հիմնած դասատունը հիշած ժամանակ պետք չէ մոռնալ հիշատակել նաև անունը անոր մեկ համեստ աշխատավորին, որ Կոլոտի և Ղուկաս հարբերդցիի կողքին իր ուժերը ի սպաս է դրած սերունդի մը դաստիարակության:

Կոլոտ, Սկոթսի Աստվածաբանության թարգմանության հիշատակարանին մեջ, ինքզինակ կհիշատակե զայն. «Յիշեցէք նաև զհարազատ մեր մեկ համեստ աշխատավորին Սեբաստացի, որ բազում երախտիս ունի վերայ մանկանց մերոց համբակաց»<sup>557</sup>:

Իսկ Նալյան, որ սանն է եղած Գասպարի Նարեկի Մեկնության հիշատակարանին մեջ սպասեց կընդունէ զայն. «Նաև՝ զդաստիարակն և զմանկամարդն լուսահոգոյ հօր մեմբրոյ դպրատան, նրբանկատ զհայրապետի մեծերուն, զտիրացու Գասպար մահտեսի մեմբր Մամուշայ կոչեցեալն Սեբաստացի, որ բազում երախտիս ունի ի վերայ մեր և այլոց աշակերտաց լուսահոգոյն, յորոյ վտարանդոսութեանն ժամանակի՝ լեալ էր ասպնջական պատսպարան, և փոխաբերաբար կաթնառութիւնս և մատակարար առ այլս»<sup>558</sup>:

Ուրիշ հիմնական մտահոգություն մը, որ ոգևորեց Կոլոտի դպրոցը, հայ ժողովուրդը անցյալը վանքերու խուցն լույս աշխարհ բերելու ցանկությունն եղավ: Հայոց պատմութիւնը կղպված էր վանքերու նկուղներու մեջ, ուր հայ ժողովուրդը իր երկիր չէր ճանչնար: Գերության մեր դարերը ոչ միայն

<sup>551</sup> Յովհաննէս Հաննա, հիշված աշխատությունը, էջ 176:

<sup>552</sup> Կարինյան ցուցակ, էջ 2:

<sup>553</sup> Անդ, էջ 144:

<sup>554</sup> Անդ, էջ 220:

<sup>555</sup> Տաշյան, «Մայր ցուցակ», էջ 569:

<sup>556</sup> Անդ, էջ 569—570:

<sup>557</sup> Բաբգին արքունից կաթողիկոս, «Յուցակ ձեռնարկաց Ղալաթիո ազգային մատենադարանի», էջ 17:

<sup>558</sup> Հակոբ Նալյան, «Գիրք մեկնութեան աղօթքի Սրբոյն Գրգորի Նարեկացոյ հրեշտակական վարդապետի», Կ. Պոլիս, 1745, էջ 1136:

լայն խրամատով մը դատեր էին մեզ մեր նախնիքներու մեծ ճիգերեն, այլ նաև թանձր վարագույրի մը ետին կապահին մեր անցյալը: Պետք էր այդ վարագույրը պատռել: Եվ այդ հնարավոր էր այն պարագային միայն, երբ վանքերու նկուղներեն դուրս կբերվեր մեր պատմությունը ու կսկսեին լույս տեսնել մեր պատմագիրները:

Նախաձեռնության պատիվը միմիայն Վենետիկին չտանք: Մխիթարյանները դեռ նոր սկսեցին էին այդ մասին մտածել, երբ Պոլիս առաջին քայլերն առած էր: Կաթոլիկ արշավանքին դիմագրելու համար, ան կարիք էր դրացի սեփական ուղղափառությունն ապացուցանելու, և անհրաժեշտ էր գտնել դիմել էին աղբյուրներուն:

Լեոն կղբե, թե այդ բանը կրնար իրագործվիլ ճշտաց դրականության հին հիշատակարանների հրատարակությամբ: Եվ Կոստանդնուպոլիսն այս ասպարեղում սկսում է կատարել շատ աչքի ընկնող, շատ հարգի դեր: Դեռ 1709 թվականին հրատարակվեց Ազաթանգեղոսի պատմությունը, և այս, ինչպես ասված է առաջաբանի մեջ, հատկապես այն նպատակով, որ հայերը կարդան և հասկանան, որ իրենք դավանում են Գրիգոր Լուսավորչի դրած հավատը և կարողանան պատասխաններ տալ հակառակորդներին: Նույն այդ նպատակն ունեն նկատի Կոլոտը, երբ 1719 թվականին հրատարակում էր Զենոբ Գլակր: Հրատարակվեցին այնուհետև Փավստոս Բյուզանդացու (1730 թ.), Մեսրոպ երեցի (1737 թ.) պատմագրությունները: Դավանաբանական հողի վրա ազգային գիտակցություն զարգացնելու համար տպագրության էր տրվում հայկական միաբնակության այնպիսի անխոնջ և եռանդուն պաշտպանի մեծահատոր գրվածքները, ինչպիսին էր Գրիգոր Տաթևացին<sup>560</sup>:

Դավանական հարցերու առթիվ Կոլոտի մասին հայտնված թեր ու դեմ կարծիքներուն ակնարկելով, Օրմանյան կրսե, թե ճշտագրական ուղղափառության ներողամիտ սկզբունքին ուղղամիտ գործադիրն եղավ Կոլոտ: Հայը յուր դավանության ուղղությունը գիտնալով ու պաշտպանելով, և ուրիշ դավանությունները հերքելով հանդերձ, ընդհանուր քրիստոնեության սկզբունքը գերիվերող կղասե, և հավիտենական փրկության պայմաններու հետ չի խառնե և փրկությունը իրեն միայն սեփական իրավունք չի կարծե, երբ ուրիշներու մոտ ալ տեսնե քրիստոնեության սկզբնական և էական ճշմարտությանց ներկայությունը: Եղան ժամանակներ՝ հորս նախանձահոգությունը մենամուլության և հա-

կառակությունները: Ընդդիմության առիթներ ընծայեցին, ինչպես ամեն արարք՝ հակաարար կզդրուեն. սակայն այն ոչ օրենք էր և ոչ սկզբունք, և հանդարտ մրցում մը կրնար իրաց վիճակը ճշտել: Ահա այս դրության հավատարիմ հետևող մը եղավ Կոլոտը, հայադավանության պաշտպան, հոռմեադավանության ընդդիմաբան, բայց ոչ ամեն ինչ որ հայկական է, այդ պատճառով միայն՝ ընդունող և զովող, և ոչ ամեն ինչ որ հոռմեական է, այդ տեսությամբ միայն՝ մերժող և անարգող<sup>561</sup>:

Օրմանյան Կոլոտի լատինամտության իբր փաստ կհիշե Մխիթարի հրատարակությանց հանդեպ իր բարյացակամ վերաբերությունը, անոնց պարունակությանը համամիտ չըլլալով հանդերձ, և իր տված զարկը լատիններեն գրքերու հայերենի վերածման, թեև անոնց բովանդակության լրիվ համաձայն չըլլալ<sup>562</sup>:

Հաննա վարդապետ, որ այնքան մոտեն կհանձնար Կոլոտի և տեղյակ էր անոր բոլոր մտահոգություններուն, կըքմեղացներ, ինչպես տեսանք, թարգմանությանց առթիվ անոր ցույց տված լայնամտությունը<sup>563</sup>:

Եվ վերջապես Լեո, ինքն ալ, դրվատիքով կարձանագրե Կոլոտի լայնախոհ բայց անդի-ջող ոգին դավանական վեճերու պահուն:

Ճշտաստարակ նա լայնախոհ և համբերող էր իբրև հոգևորական և իր նախորդների օրինակին չհետևեց այն տխուր և ցավալի հակառակությունների մեջ, որոնք բորբոքված էին լուսավորչական և կաթոլիկ հայերի միջև Կոլոտն այդ վեճերի մեջ մեղմ և հաշտեցնող ուղղության էր հետևում և դրանով քիչ չէր նպաստում որ խաղաղություն հաստատվի:

Բայց այս քաղաքականությունը, իհարկե, չէր նշանակում բոլորովին լքել Հայ Եկեղեցու պաշտպանության գործը հանդեպ այն արշավողական ուժերին թափի, որով գործում էր կաթոլիկ պրոպագանդը. Կոլոտն այստեղ ոչ մի զիջում չէր անում, բայց վեճը նա վայրենի բռնությունների, ծեծի, աքսորի հողի վրա չէր դնում, այլ զուտ գաղափարական մրցության հողի վրա: Հայ Եկեղեցու ինքնապաշտպանությունը հանձնվում էր քանադուր և գրավոր քարոզչության: Ընդունվում էր գրական պայքարի երկու ձև, մեկը՝ վիճաբանություն էր, որ վաղուց էր կիրառվում հայերի մեջ և արդեն մի խոշոր գրադարան էր մթերել դարերի ընթացքում, իսկ մյուսը՝ հայ ժողովրդի մեջ սեփական ուղղափառության գիտակցությունն ամրապնդելը<sup>564</sup>:

<sup>560</sup> «Ազգապատում», Բ, էջ 2927—2928:

<sup>561</sup> Անդ, Բ, էջ 2928:

<sup>562</sup> Անդ, Բ, էջ 2929:

<sup>563</sup> Լեո, «Հայոց պատմություն», Գ, էջ 946:

<sup>564</sup> Լեո, «Հայոց պատմություն», Գ, էջ 946—947:

Հայ Եկեղեցւոյ կարկառուն դեմքերը գերեզման դնելն առաջ Հոռմի դարբասին անցնելու մոլորութիւնը, որ հիմնական մղձաւանջներն մեկն է կաթոլիկ քարոզչութեան, ցույց տրված է Կոլոտի պարագային ալ: Չամչյան, օրինակ, կ'փորձէ ցույց տալ, թէ հայոց մեծ պատրիարքը իր աչքերը փակելիս առաջ, պահ մը Հոռմի ուղղեց դանոնը<sup>564</sup>:

Զենք կրնար Կոլոտի շրջանը փակել, առանց քանի մը խոսք ըսելու նաև այն մեծ հոգևորականին մասին, որ Երուսաղեմի համար այն միևնույն նախախնամութիւնն եղավ, ինչ որ Կոլոտ եղավ Պոլսո Աթոռին համար: Կականարկենք Գրիգոր Շղթայակիր պատրիարքին, որ Ամրդոլեն եկեր էր ինչպես Կոլոտը, և հավատարիմ էր մնացեր, ինչպես Կոլոտը, այնտեղն էր բերած իր ավանդութիւններուն: Սերտ կապը, որ միացուցեր էր զանոնք իրենց երիտասարդութեան, շարունակեց պատրիարքական Աթոռներու վրա ալ, և անոնք գործակցեցան իրարու, միակ ամբողջութիւն մը դարձած որքան իրենց հոգիներուն, նույնքան և ճիգերուն մեջ:

Գնահատութիւնը, զոր իր մասին կ'չլուսէ Հովհաննէս Հաննան Երուսաղեմի նվիրած իր պատմութեան մեջ, ձեռնասունի մը երախտագիտութեան տուրքը չէ միայն, այլ խանդավառ մեկ ներքողը իսկական արժանիքի մը, որ իսկպպես հրաշք էր գործեր, իր իսկ աչքերուն տակ, փտութեան այդ օջախին մեջ, զոր երբեմն-երբեմն եղած է Երուսաղեմը, ինչպես եղավ Շղթայակիրի Աթոռ գալն առաջ:

Հայ կաթոլիկ պատմիչ Չամչյան, որ անկեղծութեան պահեր շատ ունի անցյալ դեպքերը մեզ պատմած ժամանակ, նույնպես անվերապահ է Շղթայակիրը տարփողած պահուն. «Նստեալ նորա յԱթոռն Երուսաղէմի հետզհետէ վճարեաց զամենայն զպարտան, և եհան զամենայն գրաւան, և զարդարեար զվանսն և զեկեղեցիսն, և շքեղացոյց զնոսին ամենայն զարդուք և փառօք, և նորոգեաց զայլ ևս եկեղեցիս հայոց և զվանօրայս: Բարձրացոյց զպարիսպ վանիցն, և շինեաց ի հիմանէ զսենեակս վասն ուխտաւորաց, և ի մէջ Ս. Յակոբայ կառոյց խորան Ս. Նշանի, և մեծացոյց զաւանդատունն՝ յորում էր խորան Ս. Լուսաւորչին: Կառոյց և ի Ս. Բեթղեհէմ զվանք ծննդեան Բրիտանոսի, և ժողովեաց անոր զմիանձնուն: Եւ ի Թուրքի Հայոց ՌձձԴ (1725) շինեաց զվանքն ի Յոպպէ, և ի նմա զեկեղեցի Սրբոյն Նիկողայոսի: Նորոգեաց և զՍուրբ Հրեշտակապետի վանքն. և կանգնեաց յեկեղեցւոյ նորա խորան Սրբոյն Հովսիսիմեայ: Եւ յետ երկուց ամաց հրաման

հանեալ արքունուստ ձեռամբ Յովհաննէս պատրիարքին՝ նորոգեաց և զեկեղեցի Սրբոյն Յակոբայ հրաշալի յօրինուածովը. շինեաց և զայն բազում ինչ զորոց կարես տեսանել ի գիրս Հաննէ վարդապետի: Եւ զայս ամենայն առնէր յաջողութեամբ մեծաւ»<sup>565</sup>:

Կոլոտի շրջանի կարգ մը դեպքերուն դեպքի տիպի անդրադառնանք հետագա հատվածներու մեջ: Փակելու առթիւ իր կյանքին և իր գործունեության նվիրված այս հատվածը, պետք է ըսենք այժման իսկ, թէ ինչպես Պոլսո Պատրիարքական Աթոռին, նույնպես Պոլսո հայ գաղութին կյանքը բացառիկ դեմք մը կարձանագրեն հանձին Կոլոտի:

Երբ Կոլոտ իր աչքերը կ'փակեր 1741-ին իր Աթոռը իր ձեռնասուն Հակոբ Նալլանին հոգաւորական հանձնելէ հետո, ան արդեն տեղի գրաված էր հայ ժողովուրդի սրտին մեջ 26 տարիներու իր գործունեութեամբ, որովհետեւ ան ոչ միայն մեծ պատրիարք մը հանդիսացած էր այդ գործունեության բոլոր մարդերուն վրա անխտիր, այլ մեծ էր եղել նաև իր նկարագրով, եղեր էր անբասիր հոգևոր հայր իր հոտին:

Դարեւ մը հետո, որ լեցուն էր եղեր իր լուսաւորութեամբ և իր արեւոթնութիւնները փոխանցեր էր իր հաջորդին ալ, Կոլոտ կուգար խաղաղութիւն բերել հոգիներու մեջ, ճիգերուն լծել շուրջի մարդիկը, և ճամբա բանալ նորոգման գործը, որոնք պիտի գային լծվիլ նոր ճիգերու:

Օրմանյան իրավունք ունէր հետևաբար գրելու, թէ «Հովհաննէս պատրիարք Բաղիշեցի, մականվանյալ Կոլոտ, ոչ միայն յուրաքանչեւ զարուն, այլև շատ դարերու համար կարկառուն դեմք մըն է. կարողութեամբ և արդյամբ մեծ, որ Սահակներու և Շնորհալիներու պես հոգևոր և պաշտամունք իսկ ունեցած կըլլար. բայց եթէ ավելի հին դարերու մեջ ապրած ըլլալը»<sup>566</sup>:

Նոր դարերու մեջ եթէ մարդիկ ավելի ժլատ են հոգևոր ու պաշտամունք ընծայելու համար, մեծ դեմքերու, Կոլոտի համար հայ ժողովուրդը երախտիք մը միշտ պարտական է մարդու մը, որուն նվիրված իրենց գնահատանքին մեջ անվերապահ եղան ինչպես իր ժամանակակիցները, նույնպես և նոր օրերու մարդիկը:

Նույնքան անվերապահ է Լեոն իր գնահատութեան մեջ: «Կոլոտին վիճակված էր այնպիսի ժամանակների համար մի շտեմբար բախտ, — կըսէ ան, — նա պատրիարքութեան արավ մինչև իր մահը, շուրջ 26 տարի, և այդքան ժամանակ նրան ոչինչ չխանդարեց

<sup>564</sup> Չամչյան, Գ. էջ 824:

<sup>565</sup> Անդ, Գ, էջ 774—775:

<sup>566</sup> «Ազգապատում», Բ, էջ 2927:

իր գործունեությունը ծավալելու Այդպիսով նա դառնում էր մի դարագլուխ արևմտյան հայության մտավոր կյանքում: Բաղեռի դպրոցը Բոսֆորի ափերին ամենից առաջ նույն ներգործությունն էր անում, ինչ արել էր մի ժամանակ Սյունյաց դպրոցը: Նա դաստիարակեց դարգացած, բարեխիղճ հոգևորականներ, որոնք բարեգործության սերմերը մացրին կյանքի մեջ, ուր մինչև այդ տիրում էր փողապաշտ և փառամոլ ու բարոյապես փչացած եկեղեցականությունը»<sup>567</sup>:

Կոլոտ բաժնիվեցավ աշխարհն լուսավոր հետք մը ձգելն հետո ետևեն:

«Կոլոտը վախճանվեց 1741 թվականին, թողնելով մի բավական խոշոր և բարեկարգ ժառանգություն,— կգրե դարձյալ Լեոն:— Նրա ժամանակ Կոստանդնուպոլսում տպագրվեցին 80-ից ավելի գրքեր, մի հարստություն, որ դեռ չէր տեսել հայ իրականությունը: Նրա թողած դպրոցը հարուստ էր մտքի դարգացողությամբ և իր ձեռքին ունեւր այնքան կանոնավորված ու մշակված մի գրաբար լեզու, որ համեմատել անգամ չէր կարելի նախընթաց ժամանակի աղքատ ու աղճատված լեզվի հետ: Կարելի էր ասել, թե Բաղեռի դպրոցը հայոց դասական լեզվի վերածնունդն էր սկսում Կոստանդնուպոլսում»<sup>568</sup>:

Անիրավություն պիտի ըլլար մեր կողմն վերջին խոսքը շտալ Եկեղեցվո ուրիշ կարկառուն դեմքերն մեկուն՝ Բաբգենի, որ իբր աթոռակից պիտի բաղմեր Կիրիկիո Աթոռին վրա և որ Կոլոտի կենսագիրն եղած էր իր վարդապետության ժամանակ, այնքան ջերմ տողերով պատմելու համար մեծ պատրիարքի մը բեղմնավոր կյանքը: Տարփողելն հետո նկարագրի մարդը հանձին Կոլոտի, Բաբգեն կգրե. «Բարեբրու ապականութենեն հառաջ եկած այն մեծ հրդեհը, որ էրած տոշորած էր եկեղեցական և կրոնական վերականդանության վրա սավառնող ամենն աղնիվ հույները և կսպառնար բուն գեղեցիկ շենքն ալ լափլիղել, Կոլոտն է, որ Բաբելոնի հնոցին մեջ զովություն սփռող հրեշտակի պես կմտնե բոցերուն մեջ անխռով և իր տևական և տոկուն գործունեությամբ կկնքե իր կոշումն ու պաշտոնը»<sup>569</sup>:

Ուրիշ բան պիտի չուզեինք ավելցնել, բայց եթե սա հակիրճ եզրակացությունը, թե Կոլոտի հետ Պոլիս նոր կյանք կսկսեր: Իր գերին գիտակցիլ կսկսեր ան:

<sup>569</sup> Բաբգեն ծայրագույն վարդապետ Կյուսեմբյան, հիշված աշխատությունը, էջ 88:

«Էջմիածին» ամսագրում ընդհատում ենք բաղմավաստակ և ծանոթ բանասեր Հ. Ճ. Սիրունու «Պոլիս և իր դերը» արժեքավոր և ընդարձակ ուսումնասիրության մաս առ մաս հրատարակությունը, այն լրիվ տպագրված և շուտով գրքի վերածված տեսնելու սրտագին ցանկությունը:— Խմբագրություն «Էջմիածին» ամսագրի:

<sup>567</sup> Լեո, «Հայոց պատմություն», Գ, էջ 945:

<sup>568</sup> Անդ, Գ, էջ 950:

